ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 15.01.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲՔԱ-LO-2020/127

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն

Բողոքաբեր՝ «Դավիթ Բահարյան» Ա/Ձ

Մասնակցությամբ՝

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության ներկայացուցիչներ՝ Մ. Հարությունյանի և Դ. Արզումանյանի

«Դավիթ Բահարյան» Ա/Ձ-ի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-21/2» ծածկագրով գնանշման հարցում, փրփրահեղուկի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Դավիթ Բահարյան» Ա/Ձ-ի (այսուհետ նաև՝ Մասնակից) կողմից 21.12.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը</u>

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Մասնակիցը ներկայացրած բողոքով խնդրել է՝ պարտավորեցնել չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, միջոցներ ձեռնարկել տվյալ մրցույթի օրինական, արդար և մեր պետության շահերից բխող արդյունքի լուծման համար:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 18.12.2020թ.-ին:

Բողոքներ քննող անձի 21.12.2020թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/19138-2020 գրությամբ բողոքը վերադարձվել է՝ բողոքում առկա թերությունները վերացնելու համար:

Մասնակիցը 21.12.2020թ.-ին ներկայացրել է բողոքի շտկված տարբերակը:

22.12.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/127 համարի ծածկագիրը:

29.12.2020թ.-ին, 12.01.2021թ.-ին և 15.01.2021թ.-ին նշանակվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 12.01.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 15.01.2021թ.-ին:

2. <u>«Դավիթ Բահարյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>.

«Դավիթ Բահարյան» Ա/Ձ-ն 21.12.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Ես՝ ԱՁ Դավիթ Բահարյանս (ք. Երևան, Կուրղինյան նրբ. 14շ., բն. 38) մասնակցել եմ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության (հասցե՝ ք. Երևան Դավիթաշեն 4, Ա. Միկոյան 109/8) կողմից հայտարարված (գնման ընցակարգի առարկա հանդիսացող փրփրահեղուկի) ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-21/2 ծածկագրով մրցույթին, նշեմ, որ մրցույթի տեխ. բնութագրում նշված էր (Փրփրահեղուկ ՊՕ-6ՏՀ (6%)՝ ՏՍ 20.41.20-001-31459904-2019), որը կոնկրետ ապրանքատեսակի անվանում է և դրանով հանդիսանում է հղում կոնկրետ արտադրողի, և նշված ՏՍ-ն, որը կազմված է արտադրող ընկերության կողմից վկայում է դրա մասին, որը չի համապատասխանում ՀՀ գնումների մասին օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետի իրավական հիմքին: Բացի այդ հայերեն տեխ. բնութագրում նույնիսկ նշված չէ տվյալ ապրանքատեսակին համարժեք, այն ինչ ռուսերեն թարգմանած տեխ բնութագրում գոնե

նշված է համարժեք (или эквивалент), իմիջայլոց հայերեն և ռուսերեն տեխ. բնութագրերում պահանջվող պարամետրերը տարբերվում են, օրինակ (Кинетическая вязкость при температуре 200°С - не более 100 мм 2/с) և (Կինեմատիկական մածուցիկությունը 20°C ջերմաստիճանի դեպքում՝ ոչ ավել 100 մմ2/վրկ), այսինքն մի դեպքում նշված է 20, մյուս դեպքում 200:

Իմ կողմից առաջարկվել է «Իվխիմպրոմ» ՍՊԸ-ի կողմից արտադրված ՊՕ-6ՏՏ փրփրահեղուկը, որն արտադրվում է նույն ընկերության կողմից հաստատված ТУ 2481-348-05744685-2009-ով, նշեմ, որ և իմ կողմից առաջարկված ТУ-ն և հայտի տեխ. բնութագրում նշված ТУ-ն կազմված են նույն ГОСТ Р50558-ի հիման վրա, այսինքն հանդիսանում են համարժեք ապրանքատեսակներ: Արդյունքում մրցույթի հանձնաժողովի կողմից մրցույթը կասեցվեց և ինձ ուղարկվեց ծանուցում - 2.3 Դավիթ Բահարյան ԱՁ կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, սակայն Հավելված 1.1-ով ներկայացված տեխնիկական բնութագրում նշված է ТУ 2481-348-05744685-2009, որի տեխնիկական պայմանները չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին: Մրցույթի պատասխանատուի հետ տեղի ունեցած հեռախոսազանգի արդյունքում պարզվեց, որ մրցույթի տեխ. բնութագրով նշված ТУ-ով պահանջվում է 20°C կամ 200°C ջերմաստիճանի դեպքում՝ 1060-1200կգ/մ3 խտություն (նշեմ, որ ТУ-ի պարամետրերը գրվում են արտադրող ընկերության կողմից), իսկ իմ առաջարկած ապրանքատեսակի համար նշվում է 20°C-ի դեպքում 1000-1200կգ/մ3: Հեռախոսազանգի արդյունքում եկանք համաձայնության, որ արտադրող ընկերության կողմից կներկայացնեմ նախկինում ընկերության կողմից կատարված որևէ մի խմբաքանակի փորձաքննության արդյունք, որում և կերևա խտության իրական ցուցանիշը, նաև ինձանից խնդրեցին ներկայացնել ապրանքի երաշխիքային ժամկետի մասին հավաստող փաստաթուղթ: Իմ կողմից կից գրությամբ ուղարկվեց փորձաքննության արդյունքի օրինակ և գրություն արտադրող ընկերությունից մրցույթի տեխ. բնութագրով պահանջվող երաշխիքային ժամկետի վերաբերյալ, որտեղ նշված ПО-6ТС марки Б (6%) ապրանքի անվանումը (ընկերությունն արտադրում է А և Б մակնիշի փրփրահեղուկներ, որոնք տարբերվում են իրենց պահպանման պայմաններով) գնահատող հանձնաժողովը ընդունելով ապրանքի Б մակնիշը որպես հրդեհների В դաս (հրավերով պահանջվում է փրփրահեղուկ հրդեհների А և В դասերի հրդեհաշիջման համար), մերժում է իմ հայտը, արձանագրելով –

(Սահմանված ժամկետում Դավիթ Բահարյան ԱՁ կողմից ներկայացվել են արտադրողի կողմից տրամադրված համապատասխանությունը հավաստող

սերտիֆիկատներ, սակայն սերտիֆիկատում նշված է «Բ դասի», հրավերով պահանջվում է «Ա և Բ դասի հրդեհների հրդեհաշիջման համար», ինչպես նաև արտադրողի գրությամբ ներկայացված է 12 տարի պահպանման ժամկետ, որը չի հավաստվում ապրանքի տեխնիկական անձնագրով)

այն ինչ իմ կողմից առաջարկված ПО-6ТС марки Б (6%) փրփրահեղուկը նախատեսված է A և B դասերի հրդեհաշիջման համար (տվյալ բնութագիրը կարելի է ճշտել արտադրող ընկերությունից, որի մասին գրված է ընկերության կայք էջում և ТУ-ում, որը հանձնաժողովը ուսումնասիրել էր իմ հայտը կասեցնելիս), և արտադրող ընկերության կողմից ներկայացված գրությունը վկայում է երաշխիքային ժամկետի համապատասխանելիությունը հայտի պահանջներին, ինչպես նաև իմ կողմից ներկայացված փորձաքննության արդյունքի օրինակում երևում է, որ խտությունը 1074-է, այսինքն բավարարում է հրավերի պահանջներին և 42-րդ կարգի խախտում իմ կողմից չի եղել: Արդյունքում հանձնաժողովը հաշվի չառնելով իմ կողմից ներկայացված փաստերը մերժում է իմ կողմից ներկայացված հայտը և հաղթող ճանաչում այլ մասնակցի, որի առաջարկած գնային առաջարկը անհամեմատ ավելի բարձր է:»:

Ելնելով վերոգրյալից, «Դավիթ Բահարյան» Ա/Ձ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝ պարտավորեցնել չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, միջոցներ ձեռնարկել տվյալ մրցույթի օրինական, արդար և մեր պետության շահերից բխող արդյունքի լուծման համար:

3. <u>ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 22.12.2020թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/19239-2020 գրությամբ դիմել է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը՝ հնարավորություն տալով «Դավիթ Բահարյան» Ա/Ձ-ի կողմից 21.12.2020թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն 25.12.2020թ.-ի թիվ 02/07.3/7553-2020 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-21/2 ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ 21.12.2020թ. բողոքներ քննող անձին ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնում եմ հետևյալը.

- ԱՁ Դավիթ Բահարյանը իր կողմից մրցույթի հրավերի տեխնիկական բնութագրի հայերեն և ռուսերեն տեքստերում առկա վրիպակների վերաբերյալ պարզաբանում չի պահանջել, և այն պատճառաբանությունը, որ առկա է տարընթերցում՝ անհիմն է, քանի որ Ա/Ձ Դավիթ Բահարյանը հայտը ներկայացրել է հայերեն տարբերակով:

- ԱՁ Դավիթ Բահարյանի կողմից ներկայացրած Փրփրահեղուկ ПО-6ТС (6%) տեսակի ТУ 2481-348-05744685-2009 տեխնիկական պայմանների որոշ հատկանիշներ չեն համապատասխանում հրավերով սահմանված մինիմալ տեխնիկական պայմաններին:

Մասնավորապես.

1. ԱՁ Դավիթ Բահարյանի կողմից ներկայացված ПО-6ТС (6%) марка Б (Բ) տեսակի փրփրահեղուկի վերաբերյալ որևէ նշում, հղում կամ հիմնավորում չկա, որ այն ունիվերսալ է և կարող է օգտագործվել Ա և Բ դասի հրդեհների մարման համար: Նույն գործարանը արտադրում է նաև ПО-6ЦТ (ТУ 0258-148-05744685-98) տեսակի փրփրահեղուկ, որը նախատեսված է Ա և Բ դասի հրդեհների մարման համար, սակայն ԱՁ Դավիթ Բահարյանը ներկայացրել է, ոչ թե ПО-6ЦТ (ТУ 0258-148-05744685-98) տեսակի, այլ ПО-6ТС (6%) марка Б (Բ) տեսակի փրփրահեղուկ:

2. Հրավերով սահմանվում է, որ պահպանման երաշխիքային ժամկետը թողարկման օրվանից առնվազն 12 տարի է, իսկ ТУ 2481-348-05744685-2009-ով սահմանված է 10 տարի: Բանն այն է, որ Ա/Ձ Դավիթ Բահարյանը ներկայացրել է արտադրող գործարանի վաճառքների վարչության պետի ստորագրությամբ գրություն առ այն, որ այն տվյալ 15000 լիտրի համար սահմանվում է 12 տարի, ինչը խիստ կասկածելի է և համապատասխան մարմինների կողմից ենթակա է լրացուցիչ ուսումնասիրության՝ առերևույթ կեղծ տվյալներ ներկայացնելու հիմքով:

Նախ պետք է նշել, որ հրավերի համաձայն «...մատակարարը ներկայացնում է՝ համապատասխանության սերտիֆիկատ, արտադրող կազմակերպության կողմից տրված ապրանքատեսակի անձնագիր, լաբորատոր փորձաքննության եզրակացություն...»:

Ցանկացած փրփրահեղուկ Ռուսաստանում արտադրվում է տեխնիկական պայմանների (ТУ) համաձայն և այն հաստատվում է համապատասխանության սերտիֆիկատով: Սերտիֆիկատի տրամադրման գործընթացը իրականացվում է Ռուսաստանի Արտակարգ իրավիճակների նախարարության ենթակայությամբ գործող կառույցների կողմից և տրվում է որոշակի ժամկետով՝ համապատասխան փորձարկումներ և փորձաքննություններ անցկացնելով: Հակառակ դեպքում ցանկացած արտադրող

գործարան կարող է փրփրահեղուկ արտադրել և գրավոր կերպով հավաստիացնել գնորդին այնպիսի պարամետրեր, որն անհրաժեշտ է գնորդին:

Որակի անձնագրով հստակ և մանրամասն նկարագրվում է ապրանքի տեխնիկական պայմանները, ինչպես նաև այն խմբաքանակը, որն անցել է լաբորատոր փորձաքննություն և համապատասխանում է տվյալ ապրանքի համապատասխանության սերտիֆիկատով ամրագրված տեխնիկական պայմանների ՏՍ-ով նշված նվազագույն ցուցանիշներին:

Մինչդեռ ԱՁ Դավիթ Բահարյանի կողմից ներկայացված անձնագրի նմուշում որևէ հիշատակում չկա, որ ՊՕ-6ՏՀ տեսակի Փրփրահեղուկի պահպանման ժամկետը թողարկման օրվանից առնվազն 12 տարի է, թեև նշված է որ այն համապատասխանում է ՏՍ 2481-348-05744685-2009 տեխնիկական պայմաններին, իսկ հենց արտադրողի պաշտոնական էջում նշված է, որ ՏՍ 2481-348-05744685-2009 տեխնիկական պայմանների համաձայն ՊՕ-6ՏՀ տեսակի Փրփրահեղուկի պահպանման ժամկետը կազմում է 120 ամիս՝ 10 տարի:

Եթե ԱՁ Դավիթ Բահարյանի ներկայացրած վերոհիշյալ տեղեկատվությունը ճիշտ լիներ, ապա վերջինս կարող էր ուղղակի ներկայացնել քաղվածք ՏՍ 2481-348-05744685-2009 (Выдержка из ТУ...), տվյալ տեղեկատվության մասին նշումով հաստատված արտադրող գործարանի տնօրենի ստորագրությամբ և կնիքով (ինչպես սովորաբար արվում է), այլ ոչ թե արտադրող գործարանի վաճառքների վարչության պետի ստորագրությամբ և առանց կնիքի կասկածելի գրություն՝ հասցեագրված ԱՁ Դավիթ Բահարյանին և ոչ թե ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը:

3. Ինչ վերաբերում է ԱՁ Դավիթ Բահարյանի կողմից ներկայացված այն հանգամանքին, որ իր առաջարկը մատչելի է, ապա գնումների մասին օրենսդրությունը հավասար պայմաններ է սահմանել մասնակցի կողմից առաջարկած գնային առաջարկի և տեխնիկական բնութագրի գնահատման համար: Դեռ ավելին տվյալ պարագայում մասնակիցը պարտավոր է ներկայացնել որակավորման ապահովման բանկային երաշխիք հարյուր տոկոսի չափով: Ըստ երաշխիքի պետությունը ապահովագրում է որակյալ ապրանքի ձեռքբերումը: Տվյալ պարագայում ԱՁ Դավիթ Բահարյանը գնային առաջարկ է ներկայացրել նվազագույն այն շեմով, համաձայն որի հետագայում բանկային երաշխիք չի ներկայացնելու:

Պատվիրատուի համար տվյալ պարագայում առաջնային կարևորություն ունի ձեռք բերել անվտանգության նորմերին համապատասխան տեխնիկական պայմաններով

արտադրված, բազմակողմանի փորձաքննություն անցած փրփրահեղուկ, որն օգտագործվում է բարձր դասի հրդեհաշիջման ժամանակ և, անվտանգության նորմերից ելնելով, կարևոր և առաջնային է նրա որակական հատկանիշները:

Մրցույթում ներառված տեխնիկական բնութագրով փրփրահեղուկ արտադրում են տարբեր գործարաններ և այն մենաշնորհային չէ, մասնավորապես՝

- ООО «Огнеборец» ТУ 20.41.20-001-31459904-2019 տեխնիկական պայմաններով արտադրում է ПО-6ТСН (6%) տեսակի փրփրահեղուկ:

- ООО «Завод Спецхимпродукт» ТУ 20.41.20-001-78148123-2017 տեխնիկական պայմաններով արտադրում է ПО-6РЗ (6%) տեսակի փրփրահեղուկ և այլն:

Այսպիսով, ակնհայտ է, որ ԱՁ Դավիթ Բահարյանի բողոքը ամբողջովին առարկայազուրկ է և անհիմն:»:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2020/127 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից փրփրահեղուկի ձեռքբերման նպատակով 25.11.2020թ.-ին հայտարարվել է «ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-21/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել 02.12.2020թ.-ին ժամը 10:00-ը ներառյալ:

iii. Ընթացակարգի հրավերի մաս կազմող գնանշման հարցման մասին հայտարարությամբ սահմանվել է, որ սույն գնման գործընթացը կազմակերպվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի ենթակետի պահանջներին համապատասխան:

iv. Ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) Հավելված 1.1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը՝

Փրփրահեղուկ ПО-6ТСН (6%)՝ ТУ 20.41.20-001-31459904-2019 պայմաններին համապատասխան: Նախատեսված է Ա և Բ դասի հրդեհների հրդեհաշիջման համար:

Արտաքին տեսքը՝ միատար, առանց նստվածքի և շերտավորման: Կինեմատիկական մածուցիկությունը 200C ջերմաստիճանի դեպքում՝ ոչ ավել 100 մմ2/վրկ.:

Ջրածնային ցուցիչը (ph) 200C ջերմաստիճանի դեպքում՝ 6.5-8.5

Սառեցման ջերմաստիճանը՝ առնվազը -30C

Խությունը 200C ջերմաստիճանի դեպքում՝ 1060-1200կգ/մ3

Աշխատանքային լուծույթի փրփուրի պատիկությունը՝

- ցածր պատիկությունը, ոչ ավել 20
- միջին պատիկությունը, ոչ պակաս 60
- բարձր պատիկությունը, ոչ պակաս 200

6% ծավալային մասնաչափով աշխատանքային լուծույթից ստացված միջին պատիկության փրփուրով, 0.032+0.002 դմ3/մ2վրկ ինտենսիվության մատուցման դեպքում H-հեպտանի (ГОСТ Р 50588-2012-ով բենզին, մակնիշը՝ նորմալ 80) հանգցման ժամանակը, ոչ ավել 300 վրկ:

Պահպանման երաշխիքային ժամկետը թողարկման օրվանից առնվազն 12 տարի: Մատակարարումը՝ արտադրության օրվանից ոչ շուտ քան երեք ամիս: Մատակարարման ժամանակ մատակարարը ներկայացնում է՝ համապատասխանության սերտիֆիկատ, արտադրող կազմակերպության կողմից տրված ապրանքատեսակի անձնագիր, լաբորատոր փորձաքնության եզրակացություն և առաջարկվող ապրանքի արտադրողի (MAF-Manufacturer՝s Authorization Form) կամ նրա կողմից Հայաստանի Հանրապետությունում լիազորված կազմակերպության (դիստրիբյուտորի) անունից (DAF-Distributer՝s Authorization Form) նամակ-լիազորագիր: Փաթեթավորումը՝ 100լ պոլիէթիլային կամ պոլիմերային գործարանային տարրաներով՝ պիտակավորված և կափարակնիքված: Պիտակին նշվում է արտադրող կազմակերպության, արտադրման, պահպանման և երաշխիքային ժամկետի, քանակի վերաբերյալ տեղեկատվություն:

v. Ընթացակարգին մասնակցելու նպատակով, հայտ է ներկայացրել նաև «Դավիթ Բահարյան» Ա/Ձ-ն:

vi. Մասնակիցը թիվ 1.1 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով որպես ապրանքի ֆիրմային անվանում նշել է՝ ПЕНООБРАЗОВАТЕЛЬ, ПО-6ТС, 6%, որպես արտադրողի անվանում նշել է՝ АО ИВХИМПРОМ, իսկ որպես տեխնիկական բնութագիր նշել է՝ փրփրահեղուկ ПО-6ТС (6%)՝ ГОСТ Р 50588-2012 ТУ 2481-348-05744685-2009 պայմաններին համապատասխան: Նախատեսված է Ա և Բ դասի հրդեհների հրդեհաշիջման համար: Արտաքին տեսքը՝ միատար, առանց նստվածքի և շերտավորման:

Կինեմատիկական մածուցիկությունը 20^{0}C ջերմաստիճանի դեպքում՝ ոչ ավել 15 մմ2/վրկ.: Ջրածնային ցուցիչը (ph) 20^{0}C ջերմաստիճանի դեպքում՝ 6.5-8.5: Սառեցման ջերմաստիճանը՝ առնվազը -3^{0}C: Խտությունը 20^{0}C ջերմաստիճանի դեպքում՝ 1060-1200կգ/մ3: Աշխատանքային լուծույթի փրփուրի պատիկությունը՝ ցածր պատիկությունը, ոչ ավել 20, միջին պատիկությունը, ոչ պակաս 60, բարձր պատիկությունը, ոչ պակաս 200: 6% ծավալային մասնաչափով աշխատանքային լուծույթից ստացված միջին պատիկության փրփուրով, 0.032+0.002 դմ^3/մ^{2}վրկ ինտենսիվության մատուցման դեպքում H-հեպտանի (ГОСТ Р 50588-2012-ով բենզին, մակնիշը՝ նորմալ 80) հանգցման ժամանակը, ոչ ավել 300 վրկ: Պահպանման երաշխիքային ժամկետը թողարկման օրվանից առնվազն 12 տարի: Մատակարարումը՝ արտադրության օրվանից ոչ շուտ քան երեք ամիս: Մատակարարման ժամանակ մատակարարը ներկայացնում է՝ համապատասխանության սերտիֆիկատ, արտադրող կազմակերպության կողմից տրված ապրանքատեսակի անձնագիր, լաբորատոր փորձաքնության եզրակացություն և առաջարկվող ապրանքի արտադրողի (MAF-Manufacturer՝s Authorization Form) կամ նրա կողմից Հայաստանի Հանրապետությունում լիազորված կազմակերպության (դիստրիբյուտորի) անունից (DAF-Distributer՝s Authorization Form) նամակ-լիազորագիր: Փաթեթավորումը՝ 100լ պոլիէթիլային կամ պոլիմերային գործարանային տարրաներով՝ պիտակավորված և կափարակնիքված: Պիտակին նշվում է արտադրող կազմակերպության, արտադրման, պահպանման և երաշխիքային ժամկետի, քանակի վերաբերյալ տեղեկատվություն:

vii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 02.12.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ 2.3-րդ կետի համաձայն՝ Մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, սակայն Հավելված 1.1-ով ներկայացված տեխնիկական բնութագրում նշված է ТУ 2481-348-05744685-2009, որի տեխնիկական պայմանները չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին:

viii. Արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, որոշել է մեկ աշխատանքային օրով՝ մինչև ս.թ. դեկտեմբերի 7-ը, ժամը 18.00-ն կասեցնել նիստը և ծանուցել «Դավիթ Բահարյան» ԱՁ-ին՝ սահմանված ժամկետում շտկելու արձանագրված անհամապատասխանությունները:

ix. Նույն արձանագրության համաձայն՝ սահմանված ժամկետում «Դավիթ Բահարյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացվել են արտադրողի կողմից տրամադրված համապատասխանությունը հավաստող սերտիֆիկատներ, սակայն սերտիֆիկատում նշված է «Բ դասի», հրավերով պահանջվում է «Ա և Բ դասի հրդեհների հրդեհաշիջման համար», ինչպես նաև արտադրողի գրությամբ ներկայացված է 12 տարի պահպանման ժամկետ, որը չի հավաստվում ապրանքի տեխնիկական անձնագրով:

x. Արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետով, որոշել է Մասնակցի հայտը մերժել:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Դավիթ Բահարյան» Ա/Ձ-ի կողմից 21.11.2020թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Զարգացնելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակը կլիներ ձևական, եթե դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի կազմակերպումը չլիներ տնտեսող, արդյունավետ և օգտավետ:

Այն է՝ ընթացակարգերի կազմակերպումը պետք է լինի՝

1. տնտեսող, այսինքն՝ նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար նախատեսված ռեսուրսների, ֆինանսական միջոցների մինիմալացմամբ՝ պահպանելով նախապես սահմանված որակը:

2. արդյունավետ, այսինքն՝ արդյունքի կամ նպատակի մասով պլանավորված և փաստացի վիճակների համեմատությունը: Նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար օգտագործված նյութական և ոչ նյութական միջոցների համարժեքությունը ձեռք բերված արդյունքին, երբ ապահովվում է կատարված ծախսի և Պատվիրատուի համար դրա օգտակարության միջև պատշաճ հարաբերակցությունը:

3. Օգտավետ՝ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակով դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի արդյունքի կամ նպատակի առավելագույն մակարդակի ապահովում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել նաև, որ իրավունքի սկզբունքները հիմնարար գաղափարներ են, որոնք արտահայտում են հասարակական կյանքի օբյեկտիվ օրինաչափությունները, ուղղակի կամ անուղղակի ամրագրվում են իրավական նորմերում, իրավական համակարգի հենասյունն են, կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունները, ունեն համապարտադիրության հատկանիշ:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ ենթակետի (օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները) համաձայն՝ գնման գործընթաց՝ գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի գնման առարկայի բնութագրերը:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Վկայակոչված իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտակա-նությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է, ներառյալ՝ գնման առարկայի բնութագրի հաստատումն է: Հրավերով նախատեսվում է նաև, որ այն պետք է պարունակի գնման առարկայի բնութագրերը: Ընդ որում, հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն՝ նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ ենթակետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Վերոնշյալ նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ պայմանագրի գնման առարկայի բնութագրերի, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջների մասով բողոք կարող է ներկայացվել մինչև հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետը, ուստի և Բողոքներ քննող անձի քննությանն ենթակա են միայն այն բողոքները, որոնք ներկայացվում են մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Սույն գործի փաստերի հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից փրփրահեղուկի ձեռքբերման նպատակով 25.11.2020թ.-ին հայտարարված «ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-21/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել 02.12.2020թ.-ին ժամը 10:00-ը:

Ընթացակարգի հրավերի մաս կազմող գնանշման հարցման մասին հայտարարությամբ սահմանվել է, որ սույն գնման գործընթացը կազմակերպվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի ենթակետի պահանջներին համապատասխան: Նույն Ընթացակարգի հրավերի Հավելված 1.1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը՝

Փրփրահեղուկ ПО-6ТСН (6%)՝ ТУ 20.41.20-001-31459904-2019 պայմաններին համապատասխան: Նախատեսված է Ա և Բ դասի հրդեհների հրդեհաշիջման համար: Արտաքին տեսքը՝ միատար, առանց նստվածքի և շերտավորման: Կինեմատիկական մածուցիկությունը 200C ջերմաստիճանի դեպքում՝ ոչ ավել 100 մմ2/վրկ.:

Ջրածնային ցուցիչը (pH) 200C ջերմաստիճանի դեպքում՝ 6.5-8.5

Սառեցման ջերմաստիճանը՝ առնվազը -30C

Խությունը 200C ջերմաստիճանի դեպքում՝ 1060-1200կգ/մ3

Աշխատանքային լուծույթի փրփուրի պատիկությունը՝

- ցածր պատիկությունը, ոչ ավել 20

- միջին պատիկությունը, ոչ պակաս 60

- բարձր պատիկությունը, ոչ պակաս 200

6% ծավալային մասնաչափով աշխատանքային լուծույթից ստացված միջին պատիկության փրփուրով, 0.032+0.002 դմ3/մ2վրկ ինտենսիվության մատուցման դեպքում H-հեպտանի (ГОСТ Р 50588-2012-ով բենզին, մակնիշը՝ նորմալ 80) հանգցման ժամանակը, ոչ ավել 300 վրկ:

Պահպանման երաշխիքային ժամկետը թողարկման օրվանից առնվազն 12 տարի: Մատակարարումը՝ արտադրության օրվանից ոչ շուտ քան երեք ամիս: Մատակարարման ժամանակ մատակարարը ներկայացնում է՝ համապատասխանության սերտիֆիկատ, արտադրող կազմակերպության կողմից տրված ապրանքատեսակի անձնագիր, լաբորատոր փորձաքնության եզրակացություն և առաջարկվող ապրանքի արտադրողի (MAF-Manufacturer՝s Authorization Form) կամ նրա կողմից Հայաստանի Հանրապետությունում լիազորված կազմակերպության (դիստրիբյուտորի) անունից (DAF-Distributer՝s Authorization Form) նամակ-լիազորագիր: Փաթեթավորումը՝ 100լ պոլիէթիլային կամ պոլիմերային գործարանային տարրաներով՝ պիտակավորված և կափարակնիքված: Պիտակին նշվում է արտադրող կազմակերպության, արտադրման, պահպանման և երաշխիքային ժամկետի, քանակի վերաբերյալ տեղեկատվություն:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, ինչպես նաև ուսումնասիրելով գնման ընթացակարգի հրավերի գնման առարկայի տեխնիկական բնութագիրն ու ներկայացված բողոքի փաստական և իրավական հիմքերը, թույլ է տալիս եզրակացնել, որ «Դավիթ Բահարյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված բողոքը, վերջինիս վեճի առարկան և բողոքը ներկայացրած անձի պահանջները ներկայացվել են Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ ենթակետով սահմանված ժամկետների խախտմամբ, քանի որ բողոքով ներկայացված հանգամանքները վերաբերում են ընթացակարգի հրավերով և նույն հրավերի տեխնիկական բնութագրով նախատեսված պայմաններին, որպիսի պարագայում Մասնակիցը բողոք պետք է ներկայացներ մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Բողոքաբերն իր ենթադրյալ խախտված իրավունքների վերականգնման համար կարող էր բողոք ներկայացնել գնումների հետ կապված բողոքներ քննող անձին մինչև ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից կազմակերպված «ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-21/2» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետը,

որպիսի պայմաններում «Դավիթ Բահարյան» Ա/Ձ-ի ներկայացրած բողոքն այս մասով անհիմն է և ենթակա մերժման:

Ինչ վերաբերում է «Դավիթ Բահարյան» Ա/Ձ-ի կողմից բողոքով ներկայացված այն պնդմանը, որ վերջինիս կողմից թիվ 1.1 հավելվածով ներկայացված տեխնիկական բնութագիրը համապատասխանում է Ընթացակարգի հրավերով սահմանված տեխնիկական պայմաններին, ապա Բողոքներ քննող անձն սույն գործում առկա՝ «Դավիթ Բահարյան» Ա/Ձ-ի և Պատվիրատուի կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում հաստատված է համարում, որ Մասնակցի կողմից ներկայացված ПО-6ТС (6%) марка Б (Բ) տեսակի փրփրահեղուկի վերաբերյալ որևէ նշում, հղում կամ հիմնավորում չկա, որ այն ունիվերսալ է և կարող է օգտագործվել Ա և Բ դասի հրդեհների մարման համար: Հրավերով սահմանվում է, որ պահպանման երաշխիքային ժամկետը թողարկման օրվանից առնվազն 12 տարի է, իսկ ТУ 2481-348-05744685-2009-ով սահմանված է 10 տարի: «Դավիթ Բահարյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված անձնագրի նմուշում որևէ հիշատակում առկա չէ, որ ПО-6ТС տեսակի փրփրահեղուկի պահպանման ժամկետը թողարկման օրվանից առնվազն 12 տարի է, թեև նշված է, որ այն համապատասխանում է ТУ 2481-348-05744685-2009 տեխնիկական պայմաններին, իսկ հենց արտադրողի պաշտոնական էջում նշված է, որ ТУ 2481-348-05744685-2009 տեխնիկական պայմանների համաձայն ПО-6ТС տեսակի փրփրահեղուկի պահպանման ժամկետը կազմում է 120 ամիս՝ 10 տարի:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից փրփրահեղուկի ձեռքբերման նպատակով 25.11.2020թ.-ին հայտարարված «ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-21/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժելով «Դավիթ Բահարյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտը, գործել է իրավաչափ՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետով սահմանված պահանջներին համապատասխան:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Դավիթ Բահարյան» Ա/Ձ-ի կողմից 21.12.2020թ.-ին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/127 ծածկագրով բողոքը մերժել՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**